

լով Բեթղեհէմ գացող ուխտաւորը գէպի հարաւ իր առջեւ կ'ունենայ ֆրանկաց լեռը, հարաւ-արեւելք: Նոյն ճանապարհին վրայ, Թանթուր ըստեած տեղւոյն զիմաց, գէպի ձախ կը գտնուի անհամար փոքր խիճերով ծածկուած ընդարձակ դաշտ մը որ արաբներուն երեւակայութիւնը գրգռած և նիւթ մը եղած է միոյն այն բարոյական պատմութիւններուն որոնցմով բեղուն է արեւելքը: Մարդ մը հոն սիսեռ կը ցանէր օր մը, կ'ըսէ աւանդութիւնը, երբ Յիսուս կ'անցնէր՝ հարցուց անոր. «Ի՞նչ կը ցանես բարեկամ». — «քարեր», պատասխանեց մարդը: — «Ե՛հ, չատ լաւ, դու քարեր պիտի հնձես»: Վերջապէս երբ հունձքի ժամանակը հասաւ, հոն միայն քարացած սիսեռներ գըտաւ: Անկէ ի վեր սիսեռներու դաշտը անցորդներուն կը յիշեցնէ այն պատիժը որուն արժանի է ստախօսութիւնը: 1617ին Maundrell կը պատմէ թէ սիսեռները քարերու փոխուած են, վասնզի օր մը դաշտին տէրը մերժած է բուռ մը սիսեռ տալ Ս. Կուսին՝ որ անօթի էր: Հոս սիսեռին դաշտը կը ծառայէ իբր յաւիտենական յանդիմանութիւն կարծրասրտութեան (Br. gd. էջ 208):

Ռաֆէլի գերեզմանը. — Բեթղեհէմի մօտ ճանապարհին աջ կողմը կը գտնուի Գուպպէր Բահիլ, Ռաքէլէ գմբէթը, որ է Յակոբի կնոջ գերեզմանը: Անիկա Իսրայելացիներու, քրիստոնեաներու և իսլամներու յարգանքին առարկայ է:

Յակոբ թողուց Բեթէլը՝ ընտանիքին հետ Քեբրոն երթալու համար. «Չուեաց ի Բեթելայ, և եղև իբրև մերձեցաւ ի Քաբրաթա(*) երկիր, մտանել յեփրաթա»

(*) Քաբրաթա և համբողջութեան անձանօր չափ մըն է, ինչ-